# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ջրարբի ,

N 103
*12 դեկտեմբեր 2014թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ի կատարումն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում ՀՀ Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին>>N 55-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական փորձաքննության:

Առդիր 97 թերթ

Համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյան

*Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. Արեյան*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.79/14375-14
15 12 2014.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2014թվականի N 55-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅԿՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանիր Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 33466.2 հազար դրամ, ծախսերի գծով՝ 33466.2 հազար դրամ, դեֆիցիտը (պակասորդ) 0.0 դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

Հաստատել համայնքի բյուջեի 2013 թվականի եկամուտների և ծախսերի կատարողականը, 2014 թվականի բյուջեի հաստատված եկամուտներն ու ծախսերը և 2015 թվականի բյուջեի և եկամուտների կանխատեսումը՝ համաձայն հավելվածի:

Այս որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱՋԱՏ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ

5. ՓԱՆԱՆԴՈՒՋՅԱՆ ՄԱՆՎԵԼ

Համայնքի ղեկավար՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ